

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են խմբագրատուն մէջ:
Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ:
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամ Ալեքսանդրեան Իգիթեանցը, Վարվարէ Փարսադանեան և Գարեգին Ալեքսանդրեան Դանդուրեանները սրտի խորին ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջին իր անմոռանալի ամուսնու, իսկ երկրորդներն իրանց փեսայի

ՍԵԳՐԱԿ (Արշակ) ՍԱՐԳՍԵԱՆ ԻԳԻԹԵԱՆՑԻ

վաղաժամ մահը և խնդրում են ներկայ լինել դազազը դուրս հանելուն, որ տեղի է ունենալու իր բնակարանից—Կուկիա՝ Յերկովայայ փողոց № 22, դէպի Հաւաքարի ս. Մինաս եկեղեցին, երեքշաբթի, ապրիլի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին: Ամբիժքը ապրիլի 4-ին և 5-ին, երեկոյեան ժամը 7-ին:

Մարգարիտա Բախանայ Իգիթեանցը, երէցկին Եղիարէթ Անանեան Իգիթեանցը և նրանց որդի Բժիշկ Յովհաննէս Սարգսեան Իգիթեանցը սրտի խորին ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջին երկուսն իրանց որդու, վերջինս իր եղբոր

ՍԵԳՐԱԿ (Արշակ) ՍԱՐԳՍԵԱՆ ԻԳԻԹԵԱՆՑԻ

վաղաժամ մահը և խնդրում են ներկայ լինել դազազը դուրս հանելուն, որ տեղի է ունենալու իր բնակարանից—Կուկիա՝ Յերկովայայ փողոց № 22, դէպի Հաւաքարի ս. Մինաս եկեղեցին, երեքշաբթի, ապրիլի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին: Ամբիժքը ապրիլի 4-ին և 5-ին, երեկոյեան ժամը 7-ին:

Եղիարէթ Ստեփանեան, Սօփիա Մէլիք-Շահնազարեանց, Սառայ Գասպարեանց, Հեղինէ Նիկողայս, Ստեփան և Կոստանդին Կ. Մէլիք-Շահնազարեանց ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջին իր սիրելեակի ամուսնու, երկրորդները՝ իրանց թանկագին հօր և վերջինը՝ իր անմոռաց աներոջ

ԱՌԱՔԵԼ ԲԷԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԵԱՆՑԻ

մահը, որը տեղի ունեցաւ ապրիլի 2-ին: Ամբիժքը ամեն օր, երեկոյեան 7 ժամին, Արդութեան փողոց № 60.
Յուզարկաւորութեան օրը առանձին կը յայտարարվի:

Եզոր Աւագեան Դաւիթովը իր եղբոր և քորբերի հետ յայտնում է իր սիրելի և անմոռանալի եղբոր՝

Պ Ա Ն Ի

մահվան մասին, որ տեղի ունեցաւ ապրիլի 1-ին, կարճատեւ, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ: Մարմինը յուղարկաւորութիւնը լինելու է կիրակի, ապրիլի 4-ին, առաւօտեան 10 ժամին սիփական տանից Բէրուսովայայ փողոցի վրա, տ. № 39, դէպի Ջգրաշէնի ս. Աստուածածնի եկեղեցին: Թաղումը տեղի է ունենալու Սօփիանի Գերեզմանատանը:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Բաղադրական տեսութիւն, Ներքին Տեսութիւն, Թատրոնական մտքեր, Նամակ խմբագրութեան, Լեռներ, լուրեր, ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Պատերազմի շուրջը, ՀԵՌԱԳԻՐՆԵՐ, ՅԱՅՏԱՐ ԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ, Նամակ Գերմանիայից:

ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ

Զատիկական տօները ընթացքում քաղաքական աշխարհի մէջ տեղի ունեցան մի քանի ուշադրաւ դէպքեր, որոնք մի անգամ ևս ապացուցանում են, թէ չը նայելով ներկայ ցաւալի պատերազմին,

կաթօլիկ կղերի ամենամեծ թշնամին է եղել Նա անխնայ կռիւ էր մղում եղբայրների և կենտրոնի (կաթօլիկ համայնքի քաղաքական կուսակցութեան) դէմ: Պրուսիայի կուլտուրական կուռի հեղինակը եղել է ինքը՝ երկաթէ կանցլերը: Բանը այնտեղ է հասնում, որ Բիւնարկը, ինչպէս այսօր Կոմբը, օրէնք է մշակում և բայխաւագի միջոցով հաստատում, որի զօրութեամբ բովանդակ Գերմանիայից բռնում են բոլոր եղբայրները իրանց կրթութեան դասական օրէնագրերի 2 §-ի մէջ, այսպէս անուանված «Jesuitengesetz»:

Այժմ Գերմանիայի դաշնակցական խորհուրդը և բայխաւագը վերացրել են Բիւնարկի յօդուած օրէնքը, ասել է, ուրիշ խօսքով, որ այսուհետև կողոյեն Գերմանիայի բոլոր ծայրերը՝ Լոյօլայի գնալուն դիակները, աջ ու ձախ թունաւոր շունչ փչելով:

Դաշնակցական խորհրդի մէջ այդ նոր կարգադրութեան հակառակ են Սաքսոնիայի, Երկը ազատ քաղաքների (Համբուրգ, Բրեմեն և Լիւբեկ) և մի քանի փոքրիկ իշխանութիւնների ներկայացուցիչները: Սակայն իզուր: Ո՞վ իրաւունք ունի որ և է բան ասելու և անելու, երբ Գերմանիայի հեգեմոնիան Պրուսիան, այլ բան է ցանկանում: 25-ը որ բոլոր դաշնակցական և մասնաւոր արտաքին քաղաքական գլխաւոր խնդիրների լուծման իրաւունքը վերապահված է Պրուսիային: Պրուսիայի լաւագոյն զաւակը յօդուած է այդ օրէնքը՝ ի նպատակ ամբողջ Գերմանիայի, և այժմ նոյն Պրուսիան Վիլհելմ-Բիւլովեան քաղաքականութիւնը լուծում է նոյն օրէնքը՝ դարձաւ յօդուած ամբողջ Գերմանիայի:

Եւ իրաւ, տարբերութիւնը ժամանակի, ժամանակակից պայմանների մէջ է: Ապա թէ ոչ ինչպէս Բիւնարկեան, այնպէս էլ Վիլհելմ-Բիւլովեան քաղաքականութիւնը՝ իր տեսակետից, սրամիտ է և խելացի:

Ոչ Բիւնարկի կուլտուրական կուռի և ոչ ներկայ Վիլհելմ-Բիւլովեան «մարդասիրական» ներողամտութեան նպատակը չէ բղիւնել ընդհանուր ժողովրդի իսկական շահերի դրդումներին, ինչպիսին տեսնում ենք այժմ, առանց մազաչափ կապաճի՝ հանրապետական Ֆրանսիայում: Ընհակառակը, Գերմանիայում կատարված այդ հակառակ հոսանքները պատմել են շարունակ ցինիկ փաղափակութեամբ շուրջը, տեղի են ունեցել բացառապէս յօդուած վերին բեռնում ծայրացած փոքրամասնութեան՝ կառավարութեան շահերի: Ում համար

մարդկութիւնը ամենին չը պէտք է վրհատէ այն փառաւոր և պայծառ իդէալից, որին նա ձգտում է դարբերով—տեսնել պատերազմը միանգամ ընդմիջտ վերացած և նրա տեղ դրված իրաւարարութիւնը՝ միջազգային բոլոր վեճերի լուծման համար:

Այդ փառաւոր իդէալին հասնելու է տապներեց միւսն ևս համարվում է դաշնակցական համաձայնութիւնը՝ զանազան երկրների և ազգերի մէջ՝ խաղաղասիրական և իրաւարարական եղանակով լուծել բոլոր այն փոխադարձ վեճերը, տարածայնութիւնները և թիրախացութիւնները, որոնք կարող են ծագել երկուսի մէջ: Մինչև այժմ կայացել են արդէն մի քանի այդպիսի համաձայնութիւններ Ֆրանսիայի և Իտալիայի մէջ, Ֆրանսիայի և Հոլանդիայի մէջ, Անգլիայի և Իտալիայի մէջ, Ֆրանսիայի և Սպանիայի մէջ: Վերջին դասակական շարքին կայացաւ համաձայնութիւն նաև Անգլիայի և Ֆրանսիայի մէջ և ստորագրվեց երկու պետութիւնների կողմից մի դաշնագրութիւն, որի մասին մենք տուինք իր ժամանակին նախնական տեղեկութիւններ: Այդ համաձայնութիւնը վերաբերում է մի քանի այնպիսի կարևոր խնդիրների, որոնք կարող էին զանազան վեճերի և թիրախացութիւնների առիթ լինել միշտ Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Նա պարտաւորում է իր մէջ յայտարարութիւն Եգիպտոսի և Մարօկկոյի մասին, պայմանագիր Նիւ-Ֆաունդլենդի, արևմտեան Մօրիլիայի և յայտարարութիւն Մադագասկարի, Սիամի և Նոր-Հիբրիդիան կղզիների մասին, ուրեմն այնպիսի առաջնակարգ խնդիրների մասին, որոնք վաղուց առկա մնացած են և դարձել էին միշտ կուռածաղիկ երկու հարևան երկրների մէջ ու կարող էին առաջ բերել ապագայում զանազան բարդութիւններ:

Այժմ, Ֆրանսիայի կողմից նոր դաշնագրութեամբ այդ առկա մնացած խնդիրները կանոնաւորվում են նրանով, որ երկու պետութիւնները որոշ համաձայնութեան են եկել նրանց վերաբերմամբ: Եգիպտոսի վերաբերմամբ Ֆրանսիան համաձայնել է այլ ևս չը պահանջել, որ Անգլիան որոշի Եգիպտոսից դուրս գալու ժամանակը, իսկ Անգլիան, դրա փոխարէն, ընդունել է մշտապէս 1888 թ-ի դաշնագրութիւնը, որ ապահովում է Սուէզի ջրանցքի չէզոքութիւնը և բացի դրանից Անգլիան թողնում է իր այժմեան

վիճակի մէջ բոլոր միջազգային հաստատութիւնները, այն է խառն դատարանները, պարտքերի վարչութիւնը, հաստատում է առևտրի կատարեալ ազատութիւն, ընդունում է Ֆրանսիական դպրոցների ազատութիւնը և խոստանում է աշակցութիւն ցոյց տալ Ֆրանսիական հնագիտական խուզարկութիւններին:

Մարօկկոյի վերաբերմամբ, Ֆրանսիան անփոփոխ է պահում իր քաղաքականութիւնը և Անգլիան ճանաչում է իրաւունք Ֆրանսիայի համար հսկել Մարօկկոյի անդրորոշեան վրա և ցոյց տալ մարօկկեան կառավարութեան աշակցութիւն բարենորոգումներ մտցնելու երկրի մէջ: Դրանով Ֆրանսիան ձեռք է բերում բացառիկ ազդեցութիւն, բայց դրա փոխարէն հաստատում է առևտրի ազատութեան սկզբունքը և պարտաւորվում է ոչ մի ամբիժքի մէջ չը կառուցանել Ջիբրալտարի դէմ: Նիւ-Ֆաունդլենդում Ֆրանսիան զիջումներ է անում Անգլիային և դրա փոխարէն ստանում է Անգլիայից հողային զիջումներ արևելեան Աֆրիկայում: Մագադալարի խնդրում Անգլիան հրաժարվում է այն բոլորից, որ նա ներկայացրել էր Ֆրանսիական կառավարութեան մաքսային ըմբիւն դէմ: Միամի վերաբերմամբ անգլիական և Ֆրանսիական կառավարութիւնները հաստատում են 1896 թ-ի համաձայնութիւնը:

Եւ ուրեմն գրեթէ բոլոր առկա մնացած խնդիրների վերաբերմամբ երկու պետութիւնները, փոխադարձ զիջումների հիման վրա, համաձայնութիւն են կայացրել, իսկ ուրիշ, ապագայում ծագելի վեճերի և տարածայնութիւնների մասին նրանք դարձեալ համաձայնվել են երկարակի միջնորդ կամ իրաւարար տեսանի ընդմիջման:

25 կարելի անուշադիր թողնել և բոլորաբարձրական համաձայնութիւնը, որ ստորագրվեց մարտի 27-ին, Չառլի նախընթաց օրը: Այդ համաձայնութեան էութիւնը այն է, որ բոլորական կառավարութիւնը պարտաւորվում է արգելել իշխանութեան սահմաններում յեղափոխական կոմիտեների պրօպագանդան, իսկ թիւք կառավարութիւնը ընդհանուր ներդրում է շնորհում մակեդոնական ապստամբութեան բոլոր մասնակցողներին:

Այսպէս Գերմանիայի փաղափակ-հաստատական պայմաններ, ժողովրդի անհեղափոխական փաղափակ-հոգեբանական տարածութիւնների տիրող մակարդակը՝ Բիւնարկեան և Բիւլովեան շրջաններում, նրա համար, ասում ենք, նոյնքան պարզ է այդ տարբեր քաղաքականութիւնների ժամանակակից նպատակարարութիւնը՝ կառավարութեան շահերի տեսակետից:

Բիւնարկի քաղաքական շրջանի գլուխ գործոցի — անդամահատված, պատառ-պատառ դարձած Գերմանիան միաձուլ Գերմանիա դարձնելու—ամենամեծ ընդդիմադիր տարրը եղել է կաթօլիկ ազգաբնակչութիւնը՝ ընդհանրապէս և կաթօլիկ կղերը՝ մասնաւորապէս, առաջինը վերջինիս ազդեցութեամբ ի հարկէ: Կաթօլիկ կղերն է եղել շարունակ յաղթահարող կանցլերի ծայրայեղ հակառակը, կենտրոնացած հարաւային Գերմանիայում՝ բացառապէս կաթօլիկ Բաւարիայում, որ ամուր մեխվելով պաշտօնակալութիւն տեսակետի վրա, հակառակ է միութեան գաղափարին, զլխաւորապէս երկու կրթով բողոքական Պրուսիայի ապագայ վտանգից, երբ նա միացած Գերմանիայում ընդհանուր դեմ էր վրա առաւ: Անա Բիւնարկի անհաշտ թշնամութեան շարժառիթը կաթօլիկ կղերի դէմ: Ան-

Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.